ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/18374-2023

«27» 09 2023թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2023 թվականի սեպտեմբերի 18-ի հ/919202 Ձեր հարցման, տեղեկացնում ենք, որ հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) արտահանման թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումների ընդհանուր թիվը կազմում է մոտ 200-220, որոնցից շահագրգիռ պետական մարմինների կողմից ներկայացված դրական կարծիքների հիման վրա տրամադրվել են թվով 105 անհատական և 3 ընդհանուր թույլտվություն, իսկ թերի դիմումների վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվել են թերությունների մասին գրություններ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն տարանցիկ փոխադրման համար դիմումներ չեն ներկայացվել:

Միաժամանակ՝ հիմք ընդունելով «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՕ-42-Ն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը և նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը 2023 թվականի ընթացքում մերժվել է թվով 2 դիմում դեպի ՌԴ: ՌԴ արտահանման

համար 2023 թվականի համար տրամադրվել է թվով 30 հատ արտահանման թույլտվություն և թվով 1 ընդհանուր թույլտվություն:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ներկայացված տվյալներում, թե՛ մերժումները և թե՛ թույլտվությունները ներառում են ՀՀ կառավարության 15 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 1785-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 808-Ն որոշմամբ սահմանված ծածկագրերը:

Հարգանքով՝

9/27/2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 6911740142

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Անժելինա Չիլինգարյան, +37411597211